Փիլոնի նկարագրած կեանքը՝ դժուար է համաձուլել՝ որ այն գաղափարական սրբութեամբ ապրած ըլլայ այն մարդիկ, որք եւ կանայք, որոնց կազմած միջավայրը զուտ աշխարհիկ երեւոյթի մ՝ուներ։ Դպրոց պէտք է ըսել թերեւս Միանձնաց խրատին նկատմամբ։ Խրատողը քաղելով զայն, ըստ ամենայն հաւանութեան, միանձնական կեանքի երթալ մը չունել ուզած է՝ տարբեր Փիլոնէն։ Փիլոն՝ որք եւ կանայք միասին կ՝ապրեցընէ իւր երեւակայած սրբութեամբ։ Միանձնաց խրատողը կիները կը հեռացընէ այս կեանքէն։ Արդէն նկարագրելու ձեւն ալ կը մնանէ զայն։ "Ի կոմսն հաւատոյ„ թէ Եգիպտոսի կ՝ակնարկէ թէ Պաղեստինի։ Եւ ասոնց նկարագրութիւնն է ըրածը։ Իսկ սա յորդորը "Արդ զայս ամենայն գիտելով, եղբարք, պարտիմք թեւաւոր կոխել, եւ զիրն նախանձ սրբութեան յանձին բերելով, նմանողք լեցուք այնպիսեայ բաղմագունդ միաբանութեան յաշխարհէ„ (եղիշէ էջ 162) կը հաստատուն զայս։ Միանձնական կեանքի պատկեր մը կը գծէ խրատողը եւ անոր յարել կը յորդորէ զանոնք, որ միանձնական կենցաղի կը բաղձան։ Կամ թէ ժամանակին ըմբռնումով, աշխարհին ուերներուն եւ երկրին (Հայաստանի) կրած խժդժութեանց հանդէպ անճարացած ժողովուրդի մը յորդոր կը կարդայ՝ իւր գծած կեանքն ապրիլ։

Թարգ. լեռան միայնակեացներուն կեանքն աւելի Հեսեանց հեռուսողութիւն մ՝է, թէեւ ոչ ամէն գծերով։ Հեսեանք Պաղեստինի մէջ էին։ Թարգի միայնակեացները կրնան նոյն իսկ անոնց հեռուսողներէն ըլլալ։ Երկրագործական աշխատութիւնը, որ պարտաւորիչ էր Հեսեանց, թարգեանքն ալ ունին։ Ասի ապացոյց մ՝է։ Հեսեանց ճառէն մանր մանր բաւական նմանութիւններ աւելորդ համարեցանք յառաջ բերել։

Պատմագիրն ուրեմն թէ Հեսեանց կեանքը թէ Թարգիականներու վրայ, թէ Փիլոնի նկարագրութեան մէջ ուսումնասիրած, եւ թէ մանաւանդ Տեսեան կեանքի մարքութենէն հրապուրուելով՝ իրեն համար ամբողջ մը կը շինէ։ Շատ լաւ յաջողած է Պատմագիրն իւր կաղապարին մէջ, ինչպէս կը ցուցընեն մեր ըրած բաղդատութիւնները։ Պատմագրին ըրած փոփոխութիւններու մէջ նշանակելի է կանանց դերին ջնջումը։ Մինչ Փիլոնի ասոնց նկատմամբ գրածներն ինքն արանց վրայ ձեւած եւ միայն թիւրափեռ կիներու ճարտուներուս հետ նմանութիւնը, փափուկ ոսկիներու նմանցուցած է շշդութեամբ։

Ուշ-քրիստոնեայ մենակեցութեան քարքերը կը չափէ ու կը ձեւէ քրիստոնեայ միանձներու բարքերուն վրայ, իւր մտածումով զանոնք քրիստոնէացընելէ վերջը. կամ ինչպէս Եւսեբիոս ըսաւ (տես էջ 147, ծն. 1 բ) "ըստ վարսից վարդապետութեան աւետարանին„ կը քաղէ Փիլոնէն ինչ որ կը ծառայէ իւր նպատակին։ Շատ վարդապետարէն կը փոխէ ինչ որ Փիլոնի ժամանակին յատուկ գաղափար մ՝է կամ իր մը. զոր օր. (տես վերեւ էջ 152) Փիլոն տատաչափական զանազան գրածներու տեսակները կը յիշէ, որոնց մէջ է եռաչափ ալ, Միանձնաց խրատողը շատ լաւ կը յարմարցնէ զայն եռաչափ տարնեռ-ինն՝ "Սուրբ Աստուած„ ին։

Ընթերցողին կը թողուք այսպիսի դիտողութիւնները նմանութեանց կամ փոխառութեանց ուրիշ կէտերուն վրայ։ Բաւական մանրամասնաբար բաղդատեցինք նմանութիւնները։ Դեռ կարելի է Փիլոնէն առնուած հոյլ մը բառեր եւ բացատրութիւններ գտնել Պատմագրին գործերուն մէջ։

Բաւական է ըսել, ասկայն, թէ Փիլոն խրատպէս ազդած է մեր Հեղինակին վրայ։ Եթէ կարելի է ըսել՝ Պատմագիրն իւր ոչ ձեւքով Փիլոնը սեղմած է, իսկ ձախով Մարութեամբ՝։ Ս. Գիրքն իւր կուրծքին վրայ է ոգէն։

ԱԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ՀԻՆ ՀՈՅՈՑ ՅՈՂԼՈՅ ԱՆՈՒՆՆԵՐԸ

(Շարունակութիւն)

ՀՈՏԱՓ Զ.

Այբուբենական ցանկ տեղոյ անուանց, որ ամբողջապէս կամ կիսով չափ մեկնեալ են։

Յաջորդ ցանկին մէջ բնականապէս առած չեմ այն անուններն, որ իմ գաղտագրութեանս հանմամամ չեն կրնար հայերէնով մեկնուիլ։ Առնցմէ

զոր պէտք է հասկնալ "Հեսեանց վրայ կամ մասին խօսելէ յետոյ (Փիլոն Հեսեանց ճառը յառաջ գրած է ուրեմն քան Յեսեանքը) "եւ յաջագս այնոցիկ, որք ոչխասիրէն ինդուութեամբ ընկալան, կարգաւ պատմութեան զհետ անցանելով զարժանաւորսն ասացից„։ — Պէտք է աւելցնել այս սիրալը "Յաջագս գեղանի„ գնելով անոր տեղ։ — Հ. Գարեգին Զ. երկդիմի խորագիր մը յառաջ կը բերէ "Յաջագս Պարսից գեղանոյն կամ Յեսեանցոյ„ (Թրգմ. Ղեմեր. էջ 745)։ Եւ այլուր (անդ էջ 740) "ի Յեսեան կիսոյ„, անշուշտ ինչդն այս վերջինն է։ — Փիլոնի "Յաջագս Յեսեանի„ ճառին վերաբերութիւնը միեղի գեանի մը վրայ դրուած է այժմ (տես Revue de l'hist. des Religions seizieme année. tome XXXII, Nr. 2 Sept.-Oct. 1895, p. 207—208)։

---

digitised by A.R.A.R.@

ամենը յառաջ թէ եւ ստուգաբանորէն մեկնուած են, բայց քանի որ ես նոյն մեկնութիւններն անյայտ նոր համարիմ, ուստի սուիզուցայ զանոնք ի բաց թողուլ։ Բայց մեկալ կողմանէ այստեղ այն ամէն անուններն առնուած չեն, որոնք ամբողջապէս կամ կիսով չափ կրնան մեկնուիլ, այլ ընդհանրապէս միայն այն անուններն առնուած են, որ Հայ հնագոյն մատենագրութեան (Ե.—ԺԻ. դար) տպագիր գրուածոցը մէջ կը հանդիպին[1], իսկ անցոզակի միայն յիշուած են արդի անունները, զորոնք նորագոյն ուղեւորութիւնք եւ քարտէզք, Ինձիճեանի նոր Հայաստանն եւ Ալիշանի մեծ երկերը, Բարիւռաբանցի Աբրյան եւն մեր առջեւը կը դնեն։ Շատ անգամ այս արդի անուններ չափազանց աղաւաղուած են՝ եւ անոնց հաւատալ հայկական ձեւը ճշտելէն վերջը՝ հարկ է զատնոք հին հայերէնի վերածել, որպէս զի կարելի բլլայ ստուգաբանական տեսակէտէ՝ անոնց վրայ դատաստան բնել. այս վերածումն՝ սրշափ ալ պարզ բլլայ սկզբունքի տեսակէտէն, սակայն մասնական դիպուց՝ մէջ միշտ ամէն տեսակ տարակուսի տեղ կը թողու եւ ասով՝ անուանց քննութեան ասպարիզին մէջ արդէն տիրող անստուգութիւնը կը ստուարացնէ։ Այս բանս լերեւան կ'ելլէ ամենէն աւելի՝ երբ տեղոյ անուան մը նշանակութեան կամ իմաստին վրայ դատաստան կ'ընենք. հոս կ'արժէ հետեւեալ նախադասութիւնն. Ամէն իմաստ կամ նշանակութիւն հնարաւոր է, որ անիմաստ չէ։ Ուստի երբ տեղոյ հայկական անուն մը՝ հայ լեզուին բառագանձովը կրնայ մեկնուիլ եւ այս մեկնութեամբ ստացուած նշանակութիւնն անիմաստ չէ, նոյն նշանակութիւնն իբր հնարաւոր պիտի ներկայացընենք եւ ասա եւ այժմ պիտի չմնենք այն ինդրոյն մէջ թէ արդեօք նոյն նշանակութիւնը հաւանական կամ ապացոյվ է թէ անհաւանական։ Այսպէս՝ խոլոթարա գիւղին (տես վերն) անուան "խաչի փարա„ նշանակելը ինձի ապացոյվ կ'երեւայ, խոլոթիր գիւղին (Ջաւախք գաւառին մէջ, տես վերն) անուան "խոզի բիր„ նշանակելը՝ հնարաւոր, թէեւ ոչ համոզէր, իսկ Սոթերջոյ գեղջի (տես վերն) "սաթրջնեռու գաւառ„ նշանակելն՝ անհաւանական, վասն զի այս վերջին բացատրութեան մէջ ինչ իմաստ ունենալը՝ կը մնայ ինձի անհասկանալի։ Այսպիսի դէպքերու մէջ՝ լեզուական համեմատութիւնը, պատմական ուսումնասիրութիւնը եւ ժողովրդական կենդանի լեզուին ծանօթութիւնն ամենէն աւելի կրնան օրշիշ կերպով վճռել, եթէ կարելի է առ հասարակ այսպիսի պարագաներու մէջ օրշիշ կերպով վճռել։

Տեղոյ անունները կամ պարզ են կամ բառագրեալ, անեղական կամ անյոգնական։ Բառագրեալ անուններնը շատ թոյլ կողմնորոշութիւն մ'ունին այն պատճառաւ, որ բառագրութիւնը կը ներկայանայ շատ անգամ սեռականով, ճիշդ այնպէս, ինչպէս որ օրինակի համար գերմանիերէնի մէջ կրնայ բսուիլ թէ Strassburg եւ թէ Burg der Strasse։ Հմմտ. Ագաթանգ. տար խոր. 295 = Ագաթանգ. խոր. 301։ Այս երկու կազմութիւններն ալ ի նոյն կը յանգին, երբ սեռականը -ոյ կը վերջաւորի, որ յառաջ կ'արտաբերուէր իբր ո, զ. օր Անդոլոթիրդ = Անդոլոյ թիրդ (ԺԴ. դար). այս երկուքին հնչումը կամ արտաբերութիւնն իրարմէ տարբերութիւն չունէր։ Սեռականի ոյ վերջաւորութեան յ վերջատառին չհնչուելուն պատճառաւ՝ ան յայտնապէս զոդիչ ձայնաւոր եղած է Զարեփոր անուան մէջ, որ ծագած է հնագոյն Զարոյ փորէն. այս Զարեփոր ձեւէն զատ կայ եւ ուղիղ կազմուած Զարեփոր ձեւը։ Նոյն կերպով ծագած են նաեւ Կոդեփոր, Ծոթեփոր՝ եւն, նոյնպէս նաեւ անշուշտ — յի չհնչուելուն պատճառաւ — Կոթվիթ՝ հնագոյն Կոթոյ-ովիթ, Բաթոյ-ովիթ՝ հնագոյն Բաթոյ-ովիթէ եւն։

Անեղական անուններուն շատ յատկան հայցական հոլովով գործածուելը — հայցական կը գրուի նաեւ ուր եւ յո հարցումներու դիմաց — պատճառ եղած է ոչ միայն հայցականին մերթ ընդ մերթ իբր ուղղական բանեցուն — հմմտ. Կոտոս իբր ուղղական Զենոբ 36՝ փոխանակ Կոտոսի, Ծողվ Ցվմ. Մամիկ. 40, Անինը Ցվմ. Մամիկ. 32, Շիրմոն Ասող. 197, Ծիրանիս Լաստիվ. 79 եւն —, այլ նաեւ -ս վերջաւորեալ ձեւն՝ անուան բուն ձեւն եղած է թէ նորագոյն եւ թէ նոյն իսկ հնագոյն ժամանակները։ Այսպէս հայ. կոտոս (հայց. ուղղ.՝ Զենոբ եւ Ցվմ. Մամիկ.) եղած է արդի Guvars (Լինչի քարտէզին վրայ). հայ. հայց. կոտս (սեռ. կոտսոց) եղած է արդի Kars[2]. հայ Աբեռանի Ազէր. Սիսակ. 325՝ Աբեռանս, Աբեռանս. Կեչառուս (սեռ. Կեչառուսաց) Կիր. 84 եւ շար.՝ Ketscharus (Müller-Simonis Vom Kaukasus zum Persischen Meerbusen էջ 36). Վարդենի եւ Վարդենիս Ինձիճ. Նոր Հայ. 181, 191. Մոխ, հայց. Մոխս, Մոխս Ինձիճ. Նոր Հայ. 161, Mukus (Լինչ), յն. Μῶεξ կոստ, Պորփ. 1, 684 de cerim., լտ. Moxoena (Դ. դար). ասոր. Bēθ Moksāyē վերն էջ 83. Դեպէր, հայց. Դեպէս՝ Δίγτισ-ηνή իբր 600ին (վերն էջ 154). Անեղական անուններուն արդի ձեւը սակայն միշտ հին հայցականէ մը ծագած չէ. ընդհակառակն ուղղականի -ն ալ երբեմն մնացած է, հմմտ. Պարտանի Ինձիճ. Նոր Հայ. 162, Ադրանի անդ 308՝ հին հայ. Ադրանիսէ. Վանի անդ = հին հայ. Վանիս. Պարդենի՝ Զմշկածագի արեւմտակողմը Լինչի

[1] Զոր օր. Բիւրլիս, հայ. Բարձլ — պալ-ի-ել "ձեան մէջ պաղած էղէ„ մը անուանուած Ինձիճ. Նոր Հայ. 171։

[2] Թովմայի Մեծոփեցւոյ գործէն օգտուելով այնչափ, որչափ որ քաղուածօրէն կը գտնուեր Ինձիճեանի (Հէր.) քով։

[3] Բիւրլեռ՝ արաբ. Badlīsī փոխարէն՝ հին հայ. Բաղլէս, Šoregel (Լինչի քով՝ Shuragel) հին հայ. Շիրուանաձէ եւն։

[4] Հմմտ. Դանիէլեան, որ Հայկական օրինաց Համեմատ չի կրնար աւանդական հին հայ. Դանիելանէն բլլալ։

[1] Հմմտ. Բոնոփոր վերն էջ 287։

[2] Ուղ. հայց. Տիբանիս, սեռ. Տիբանեաց օրինակներուն նման են՝ վերագրելն -is վերջաւորեալ անուանք ալ, այսպէս Manglis Brosset Description 171, արաբ. Manjalis, հայ. Մանիգլեաց փոր վերն էջ 287, Dmanis, հայ. Դմանեաց Ինձիճ. էջ. 517. Olti's Brosset 119, հայ. Ոլթեաց = Ոլթիեաց Ասող. 189, 278, Լաստիվ. 9։

[3] Արդէն Կոստ. Պորփ. քով 3։ 192 de adm. imp. τὸ Κάρς.

քով՝ հին հյ. Վարդենիկ եւն, երբեմն ալ -ուն կ'ելլեայ կամ -ի տեղ կ'անցնի արդի հայերէնի -եր վերջաւորութիւնը, հմմտ. Աղաթոպ՝ Աղաթոպիկ (տես վերը), Գեղաքեմ՝ Գեղաքեմիկ՝ (տես վերը), Աղբանոբ Ինձիճ. Նոր Հայ. 267՝ հին հյ. Աղաթոպիկ։ Վանայ լճին արեւմտակողմն եւ հարաւակողմը շատ մը գիւղեր կան, որոնց անուններն -անց կը վերջաւորին, զ. օր. Ականց, Նորավանց, Ապլանկանց, Սիրուանանց, Բենտեկանց, Զարիկանց եւն որ Դ-ամմատի բառերուն սեռ.-ին պէս կը հնչեն։ Այս անուններն՝ այսպիսի համարելու պատճառ կրնար բլլալ Կոխպանց անունը (Petermanns Mitt. 35, 1889 տխտ. 9, վերն էջ 213), որ Արծրունեաց քով 214 Կոխպանից գէ-ը կը կոչուի։ Բայց քանի որ Կոխպանից սեռականն իւր ին պէտք էր պահել արդի հայերէնի մէջ, ուստի կրնանք ընդունիլ թէ Կոխպանց հին հայ. *Կոխպանս յոգնական հայցականէն է (ուղղ. Կոխպանք, սեռ. Կոխպանից) եւ ենթադրել թէ -նս՝ անցնելով -ՆՑ՝ եղած է -ՆՑ, հմմտ. Karst Hist. Gramm. էջ 105—106։ Այս պարագային Նորավանց Ինձիճ. Նոր Հայ. 155 Նորավանի *Նորավանս հյց.-էն է (Ալիշ. Սիսական. թանկ) եւ -անց վերջաւորեալ անուններեր՝ վերը յիշուած -ս վերջաւորիչներուն պէս՝ հին յոգ. հյց. համարուելու են։

Հայերէն անուններեր հայ մատենագրութեան մէջ իրենց նախնական ձեւերը կը պահեն եւ կենդանի լեզուին փոփոխութիւնները չեն ներկայացներ։ Այս պատճառաւ ալ գաւառական երեւոյթը եւ աշխարհաբարի կազմութիւնք շատ ցանցառ են. բնականապէս վերջինիք կը տեսնուին լոկ նորագոյն անուանց վրայ։ Հմմտ. Խի եւ Հի զիրար փոխանակելը ի Խեր = Հեր էջ 209, Ենձաքի ձոր = Անձաքի ձոր էջ 220, Խաղցնի վերն էջ 280 ծան., Ղնի՝ ղի փոխուիլը Մղնոյ = Մղոյ էջ 128, ամբրաձեւը փոխանակ արմաթ (Karst Histor. Gramm. էջ 104) Ամբրաւաթոր ? անուան մէջ, կարմանը Ալիշ. Սիսական. 64 = արդի հայ. կարմանի՝ փոխ. հին հայ. կարմ-ըմի, Ղազոյ (Ղազոյ) փոխ. հին հայ. Ղազոյնի՝ Զազոյոյ անուան մէջ եւն Ալիշ. Սիսական. ցանկ, -եր վերջաւորեալ Աբբաներ, Գոմեր, Կալեր, Խալեր, Հաղեր, Ցաքիեր եւն յոգնականները. Զայնանան տեսակէտէ ի մասնաւորի միտ դնելու է որ հին հայի. մուտ ԸՐ շատ կանուխ արդէն Ղ, նուրբերեն յատաՀ՝ ի եղած է, այնպէս որ այն ամէն ձեւերն, ուր հիմայ Ղ կ'արտասանուի փոխ. Ղ (Խ)։ Հին կրնար Հայոց բերանին մէջ ծագումի առած բլլալ, այլ հարկ է որ մեզ հասած բլլան Աբարաքուց, Քրդաց, Թրքաց կամ Վրաց միջնորդութեամբը։

ԱԲԱՍԱՀՈՐ գիւղ Թ. 153 Զորափոր գ.-ի մէջ կիր. 109. Աբաս յատուկ անունէն Ցոմկ. կիր. 80, Ասող. 179 եւն, արաբ. ʿAbbās + յոր =

1 Կամ Գեղաքեմ։ Կը գտնուի կիր.-ի եւ Վարդանայ քով Գեղաքեմոց (սեռ.) եւ Գեղաքեմ (հյց.)։ — Ի՞նչ գուրս բնկած է Ղեմ անուան մէջ՝ Ղեմէ կամ Ղեմէ Ալիշ. Այրարատ 147։ Ռաբիկ՝ Ռաբիկէ կամ Ռաբիկէ (ուղղ. Ցոմկ. Մատիկ. քով 32) եւն։

2 Ցոմկրդ ցանկին մէջ՝ Թ.— Թիւ, գ.— գաւառ, ԱՍ.— Աբիշան, Այրարատ, ԱՍ.— Աբիշան, Սիսական։

"Աբասի ձոր„ — Աբաս "հայր, աբբայ„ = յն. ἀββᾶς տես էջ. էջ 338։

ԱԲԹԱՍԵՐԷՆ գիւղ Սիւնեաց մէջ Օրբել. 2, 241, ԱՍ. 196. վերնոյն պէս Աբաս + էն "Աբասի էն, գիւղ„։

ԱԲԿԱՎԱՆՔ կամ ԱԲԿԱՑ ՎԱՆՔ՝ տեղի Թ. 119 Ալեւիք գ.-ի մէջ Օրբել. 271, ԱՍ. 21, 289. Աբկի կամ աբուլ? + վանք։

ԱԲԵՂ-ԵԱՆ-Ք Թ. 173 գ. Այրարատայ մէջ. տես վերն էջ 248։

ԱԳԱՐԱՆ՝ գիւղերու եւ տեղեաց սովորական անուն, զ. օր. Այրարատ Նահանգին Թ. 181 ձակատք գ.-ին մէջ ԱՍ. 119, Թ. 187 Մազազ գ.-ին մէջ ԱՍ. 334, 349, Թ. 178 Շիրակ գ.-ին մէջ ԱՍ. 112. Սիւնեաց Նահանգին Թ. 110 ձախուկ գ.-ին մէջ Օրբել. 273, Թ. 111 Վայոց Ձոր գ.-ին մէջ Օրբել. 262, Թ. 116 Հաբանդ գ.-ին մէջ Օրբել. 267, Թ. 117 Բաղք գ.-ին մէջ Օրբել. 268, Թ. 119 Ալեւիք գ.-ին մէջ Օրբել. 271. Կորճէից մէջ բերդի մ'անուն Աբծր. 263, 270, 278, 279 (Մէջտ՝ "բերդն Ագարակայ եւ գաւառն ձախուկ„ Թ. 72). Տարուբերանի Թ. 30 Տարաւն գ.-ին մէջ՝ Ազարիլաս առանին մէկ այգւոյն անունը. "յայգեանն եկեղեցւոյն, որում Ագարակն կոչեն„ Փաւստ. 42 = ագարակ "կալատեղ„ եւն. տես էջ 272։ Ասկէ՝ ԱԳԱՐԱԿԻԿ, տեղի Թ. 115 Ծղուկք գ.-ին մէջ Օրբել. 260 = ագարակ + իկ։ ԱԳԱՐԱԿԻ ՁՈՐ, գիւղ Թ. 111 Վայոց ձոր գ.-ին մէջ Օրբել. 2, 96, 103, 262. ԱԳԱՐԱԿՈՒ ԳԵՏ, տեղի Թ. 114 Ազահեղք գ.-ին մէջ Օրբել. 266։ — Հմմտ. Ագարակ անուն տեղը Վայոց մէջ Պատմ. Վայոց 91 (Խուճան ամրոցին հանդէպ՝ Կուր գետոյն վրայ)։ Քանի որ ագարակ՝ արդի հայերէնի մէջ ագարակ, թրքական արտասանութեամբ եէրեկ կ'բլլայ, շատ դիւրաւ կրնայ թրքերէն եէրեկի հետ շփոթիլ։

ԱԳՈՒԼԻՍ մեծ գիւղ. Թ. 106 Գողթն գ.-ի մէջ Ինձիճ. էջ. 216, Դաւրիժ. 217 եւն, էջ մեկնուի այլի + լիսվ (Արբանեանց Ս. Ագուլիսի գաւառաց. էջ 4 ծան.) կամ այլեսլ + լիսվ. բայց անուանս հնագոյն ձեւն էր (ԺԱ. դար) Ագուլիք ԱՍ. 324—325, Ագուլիք Օրբել. 2, 54։ Ըստ այսմ՝ Ագուլիս գրուած է հնագոյն Ագուլիսի տեղ, որ յոգնական հայցականն է Ագուլիքի։

ԱԳՈՒԱՌԱՑ ՔԱՐ կամ ԱԳՈՒԱՌԱՔԱՐ տեղի Թ. 83 Ամնձաւանքի գ.-ին մէջ Թուղթ առ Սահակ Աբծր. եւ Պատմ. Հռիփսիմ. Խոր. 295, 301. ագաառ (սա-արմատ) + տոք։

ԱԶԱՏ գեղ Գառնեոյ եւ Դարեոյ քով Այրարատու մէջ, ճիւղ Երասխայ Խոր. 194, ԽԱՍ. 34, Վարդան աշխարհ. 422, Ինձիճ. էջ. 469, ԱՍ. 331, սահման ընդ մէջ յուշական եւ պարսկական Հայոց՝ 591է ակսեալ Ցոմկ. կիր. 42, τὸν ποταμὸν ʿAζάτ Combefis histor. Monothelit. էջ 281 = ազատ (պահլ. āzāt էջ. 91)։ Հմմտ. Ազատ գետ = ʿΕλεύθερος յԱսորիս Խոր. 97, ԽԱՍ. 36։ Ազատ է նաեւ վերագիր՝ Մատեաց Խոր. 58 եւ 139 (յազատ ի վեր ի Մասիս), Աբծր. 254, ԽԱՍ. 32 (սեռ. Ազատ Մատեաց), Սուտ-Սեբ. 7, տես վերն էջ 187։ ԱԶԱՏՔԱՂԱՔ տեղի Թ. 112 Գեղարքունեաց գ.-ի մէջ ԱՍ. 38, 66։

digitised by Ararat

ԱԶՆՈՒԱԶՈՐ, Ազնուազոյ Յոբ Թ. 23 գ.։ Ազնի+Յոբ = "Ազնիւ Յոբ,, "Յոբ ազնուաց կամ ազնուականաց„ ?, տես վերն էջ 170։

ԱԼԱԾԿԵՐՏ ԱԱ. 522, 536 տես Վաղարշակերտ։

ԱԼԵԼՈՒԱ ԴԱՇՏ Թ. 15 Հանձիթ գաւառին մէջ Ուռհ. 250, 251, Ալելուայ գաւառ Ինճիճ. էջ. 59, Ցամաշէկ՝ կիպերտի հանդիսին առթիւ հրատարակուած գրքին մէջ էջ 138. Ալելու կամ Ալելու = ? (ալելուիա, ալելու = յն. ἀλληλούϊα IF. 10, Anz. 43 կարելի չէ համարել) + դաշտ։ Ալելուա անուանով տեղ մը կը յիշէ ԱԱ. 209 Թ. 120։. Ալլաի գ.ին մէջ։

ԱԽԱԼ-ՔԱՂԱՔ Մոթ. Ուռհ. 175, ԱԽԱԼ-ՔԱՂԱՔ Պոմ. Վրաց 112, "Նոր քաղաք, որ Վրաց Ախալ քալաք ասեն„ Վարգ. 101. վրացերէն ախալ ("նոր, Զուբիանով 43) + վրացերէն ։-ալ։ "քաղաք„ = "նորքաղաք„։ Ալյա Թ. 160 Ջաւախք գ.ին մէջ գտնուող քաղաքին նկատմամբ տես Brosset Description էջ 101։ Քաղաքիս անունն էր վրացերէնի մէջ Ախալ-ալ-ի(ն), կէս Հայացած՝ Ախալ-ալ-ի, որ Մոթ. Ուռհ. սխալմամբ Ախալ ըմբռնած է, իսկ բոլորովին Հայացած՝ "նոր-քաղաք։

ԱԽՈՒՌԱՆՈՒՆ Օրբել. 265, Բրսէի եւ ԱԱ.ի (էջ 64) քով ԱԽՈՒՌԱՏՈՒՆ, տեղի Թ. 113 Սոթք գ.ին մէջ. ախոռ էջ. 93 + տուն? "Ախոռի տուն„ խնամք գրաւիչ չէ եւ ընթերցուածն ալ տարակուսական է։

ԱԾՈՒՂ գիւղ Թ. 41 Ապահունիք գ.ին մէջ, այլուր Դալարիք կոչուած Փաւստ. 52—53 "փոխանակ զի իմ երկու աչքս լուսաւորքս խաւարեցան յայս տեղս, որպ փոխանակ Դալարեացս անուանի՝ Ածուղ անուն լիցի սմա մինչեւ ցյաւիտեանս ժամանակաց„ (այսպէս կ'ըսէ Հայոց Տիրան թագաւորն, որուն աչքերը խարեցին Պարսիկք) = ածուղ "գործելի„ Փաւստ. 52, տող 1 վերէն, 53 տող 2, Ագաթ. 168, յեռանագոյն ձեւ՝ ածուխ։ Ասող. 69 Արյիոլն կը գրէ փոխանակ Ածուղի, թէ եւ Փաւստոսի յենլով, իսկ Վարգան 46 Արծուղն։

ԱԿԱՆԵՔ, տես. Ականեաց Ցովհ. կթղ. 178 լեռ ընդ մէջ Թ. 83 Արձեացիք գ.ի եւ Թ. 89 Աղքակ գ.ի. ակնէ "աղբիւր, պատուական քար„ ?։ Հմմտ. ակնի՝ ակնէ։ — Ակէ զանազանելու է Ականից "դաշտն որ կոչի Ականից„ Սեբ. 73 Թ. 178 Շիրակ գ.ի մէջ, Ականիս, Ականից Ակիշան Շիրակ 9, 11։

ԱԿԱՆՆԵՔ տեղի Թ. 120։. Ալլաի գ.ի մէջ Օրբել. 261, Թ. 114 Աղահէնք գ.ի մէջ Օրբել. 266, Թ. 113 Սոթք գ.ի մէջ (Ականդ կամ Ականդ?) Օրբել. 265, ԱՍ. 64, ԱՒ Թ. 117 Բաղք (= քաշունիք) գ.ի մէջ Օրբել. 269. ակնէ (յոգ. ակունք, ականց, ակունս կամ ականս) "աղբիւր„ կամ ակնէ (յոգ. ականք) "պատուական քար„ ?։ Հմմտ. Eghin քաղաքն Եփրատայ արեւմտակողմն "հայ. Ակն՝ քաղաքին մէկ յորդաբուղխ ասէն„ Cuinet 2, 364։

ԱԿՈՒՈՒ գիւղ Թ. 182 Մասեաց տան գ.ի մէջ Փարպ. 376, Ինճիճ. էջ. 345, Մասեաց հիւսիսային ստորոտը (1840ին Ցուլիս 2ին երկրաշարժով կործանուած). արդ տես մեկնութիւնը (տես Koch, Reise nach dem Ararat 166, Lynch Arm. 1, 183 եւ շար.) բնականապէս բոլորովին անյայտ է եւ բան ինքեան այլ եւս երկիւղալու չէր։ Արդի Արիւրի ձորը՝ այս ստուգաբանութեան վրայէն ձեւուած է։

ԱԿՍԻԳՈՄՍ վանք Թ. 171 Բասեան գ.ի մէջ Ծիրանիս լեռան ստորոտը Ասող. 185, Հյց. *Ակսիգոմի. գոմ բառն ?։

ԱՂԱԹԱՂՔ ԱՍ. 287 = ԱՂԱԹԱՆՔ Օրբել. 271 տեղի Թ. 120 Կուսական գ.ի մէջ. Ք-ղ բառն ?։

ԱՂԱՀԱՆՔ վանայ լճին արեւելեան ափին վրայ՝ գեղ ի հիւսիս (կիպերտի քարտէզին վրայ), Ագիհան։ ZAE. 1864 տխտ. Գ = աղահան։

ԱՂԱՂԵՒԻՐ Թ. 172 Գաբռղնանք գ.ի մէջ ԱԱ. 54. ղ + ալիւր = "աղի աղբիւր„։

ԱՂԱՑՈՎԻՑ կամ ՀԱՂԱՑՈՎԻՑ Թ. 77 գ.՝ Երիկամ բերդով (Բերկրի մոտ՝ Թ. 79 Ապրանքի գ.ին մէջ) Արծբ. 247, Ինճիճ. էջ. 195. (Հ)աղաց ? + ովիա = հովիա։

ԱՂԱՒՆԵԱԿ տեղի Թ. 119 Արեւիք գ.ին մէջ ԱՍ. 299 = աղունեակ "փոքրիկ աղունի„։

ԱՂԱՒՆՈՑ ԳԵՏ Սիւնեաց մէջ ԽԱՍ. 33 (Լինչի քով՝ Akera), տես. "գետոյն Աղաւնոյ„ Օրբել. 1, 122, 128, ԱՍ. 4. աղունիկ ?, տես. աղունոյ։

ԱՂԲԵՐԱԿԱՆՔ. "մեռ ի գեօղն՝ որ անուանի Դու, ի դաշտին Աղբերկանոյ՝ զոր Արծաթաղբերքն կոչեն„ Փարպ. 446 Թ. 171 Բասեան գ.ին մէջ = աղբերկան։ (Ջուրք) "աղբերաքաղուրք„։ ԱԱ. 16 կ'ընթեռնու Աղբերկանոց = "դաշտ աղբիւրներու„, աղբերակոյն բառն (յգ. աղբերակունք, սեռ. աղբերականց)։

ԱՂԲԵՐԱՁՈՐ տեղի Թ. 113 Սոթք գ.ին մէջ Օրբել. 265. աղբիւր+ձոր։

ԱՂԲԵՐԻՑ ԳԵՒՂ = ԱՇԼԱԲԵՐԴԻՑ, ԱՇԼԱԲԵՐԻՑ ԳԵՒՂ Թ. 186 կոստյք գ.ին մէջ. տես Ինճիճ. էջ. 456, ԱԱ. 286, այժմ՝ Alapars կիպերտի աշխարհագրացին վրայ։

ԱՂԲԵՐԽԱՁ տեղի Թ. 110 Ճահուկ գ.ին մէջ. աղբիւր (տես. աղբիւր բառին)+խաչ "աղբիւրի խաչ„։

ԱՂԻ (տես. Աղոյ՝ փոխանակ *Աղոյ) գիւղ Արծիշու քով (որ էր Թ. 40 Աղիավիտ գ.ին մէջ) Սեբ. 93, Թումմ. Մեծոփեցի Ինճիճ.ի քով էջ. 506 (Մեծոփայ վանքին մոտերը). «է ոչի ածաւ կանէն եւ «է ալ ոչ ալ աղի բառէն։ Հմմտ. լեռան Աղո (Աղու՝ փոխանակ Աղոյի Աղոյ?) = "լեռան Աղիի„ ? Աղիսոյի մէջ Թումմ. Մեծոփ. Ինճիճ.ի քով էջ. 128։

---

1 Քանի որ Ողբոց մէջ գ. 8 ածուխ կը գտնուի, ածուխ ձեւը սկզբնական համարած եմ էջ. 412։ Բայց սովորաբար հմտ, ուր չի տեղ անցած է ի, ղվ ձեւը սկզբնական է, վասն զի այս ղը (ղ) յեռանագոյն հայերէնի մէջ γ (ղ) կ'ըլլայ, եւ այս ալ երբեմն ի։

2 ալիւրոյն բառն որ է "աղբիւրի վերաբերեալ, աղբիւրեն եկող, πηγαῖος„։

digitised by A.R.A.R.@

ԱՂԻՈՎԻՏ, հնագոյն՝ Աղս հովիտ, Աղ-ոյ-ովիտ Թ. 409 գ. Տուրուբերանի մէջ. *Աղս հովիտ, է։

ԱՂԻՈՐՍԷ քաղաք Թ. 41 Ապահունիք գ.ին մէջ Մասիս (այսինքն՝ հոս Սիփան) լեռան տակը փաւաս. 51. Աղ?+որս, յգ. որսէ փաւաս, 51։

ԱՂԻՒՍՈՑ գիւղ կամ ագարակ Թ. 5 Մառնանդի գ.ին մէջ Լաստիվ. 103. Նախադասութեան կողմնութեան՝ հոմմնամ՝ եզանի ուղղական է, ուստի = ազ-ս (սեռ. տր. ազ-ոյ) չէ։

ԱՂՆՃՈՑ ԲԵՐԴ տեղի Թ. 111 Վայոց ձոր գ.ին մէջ Օրբել. 263 = բերդ Աղնեի կամ Աղուենի? Հայ. ազնէ, ազնէ՝ իբր ռամկական ձեւ հին հայ. եղնէ, եղնէ բառին կը յիշուի Հ.Ի մէջ. տես Karst Histor. Gramm. 50։

ԱՂՈՒԱՆԻՑ ԲԵՐԴ Թովմ. Մեծոփ. Խնճիճեանի քով Հ.Հ. 507, նաեւ պարզապէս Աղուանէ կոչուած («Ծղուքայ եւ Աղուանից եւ այլ գիւղերից» անդ)։ Աղուանէ անունէն?։

ԱՂՈՒԱՆԹՈՒՈՑ կամ ԱՂԱՆԹՈՒՈՑ Թ. 97 գ. Վասպուրականի. Աղուանդ., Աղանդ?+ոց «գեան»։

ԱՂՈՒԶԻԿ կամ ԱՂԻՈՑ ԶԻԿ տեղ մը Թ. 116 Հաբանդ գ.ին մէջ Օրբել. 267, ԱՍ. 255. Աղ-ոյ (սեռ. Աղի բառին?)+ԶԻԿ այս է՝ ջուր+ԷԿ մնանիկ։ Հմմտ. Աղուանէ կամ Աղոյ վանէ տեղ մը Թ. 119 Աբեւիք գ.ին մէջ Օրբել. 271, ԱՍ. 298։

ԱՂՈՒԻՍԱՀԱԳԻՒ տեղ մը Թ. 114 Աղաշէնք գ.ին մէջ ԱՍ. 267. աղ-ի-ս+հագի?։ Հմմտ. աղ-ի-սի։

ԱՂՋՈՑ ՎԱՆՔ Վարդ. աշխ. 420, «այս ինքն է Աղիանոյ վանք», յաւելուածով Յայսմ. Խնճիճեանի քով Հ.Հ. 269։ Բայց այս յաւելուածն որ ձեռագիր Յայսմաւուրքին մէջ կայ, իսկ տպագրին մէջ գուցե թողուած է (Խնճիճ. անդ), ընդօրինակողին այն անհիմն ենթադրութեան վրայ հաստատուած է թէ ազվ կամ ազիՀ = ազվի ըլլայ։ Հայ. ազվ մը գոյութիւն չունի, իսկ կարելի չէ այստեղ նկատողութեան առնուլ ազվի՝ փոխանակ ազիՀի։ ԱՍ. 354 այս վանքն Աղվոյ վանք կը կոչուի։

ԱՂՋԻՏԱՓ, ԱՂՋԻԱՏԱՓ Թ. 111 Վայոց ձոր գ.ին մէջ ԱՍ. 116, 117. ազիտ-ոյ+ոփ = «աղջոյ գաղար»։

ԱՂՏՔԷ ձորն Աղաթից անուան մէջ, որ Սուկաւ լեռան մնաթը (Քէօսէ-գաղ Թ. 176 Բագրեւանդ գ.ին մէջ) կը յիշէ Ասող. 271. աղտ+ձոր = «ձոր աղտահանքերու»։ — Շատ տեղ կը յիշուին կողքայ աղտահանքերը՝ (Թ. 181 Ճակատք գ.ին մէջ). տես վերը կողքոտոր անուան տակ. Պաղդատի աղտահանքերու մասին տես ԱՍ. 49։

ԱՂՑՔ (սեռ. Աղցէ) կամ ԱՂՁԷ գիւղ Թ. 180 Արագածոտն գ.ին մէջ Փաւաս. 144, Խոր. 213, Սեբ. 78, Ասող. 87, Յովհ. կիթ. 43, այժմ՝ Աղ-ս ԱՍ. 147 իւր իմաստին բերմամբ չի կրնար ազտ «պիտոյք, կարիք» բառէն ըլլալ։

ԱՂՕՐԻ, ԱՂՈՐԻ կոչմանք Տայոց մէջ Լաստիվ. 4 եւ 82, կարգա՝ Աղրդի? Խնճիճ. 375, ուստի = աղ-որ-ի «Հաղորք»։

ԱՄԱՌԱՇԷՆ տեղի Թ. 109 Երնջակ գ.ին մէջ Օրբել. 272. տեսս-?+ջէն։

ԱՄԲԱՐԱՆԱՔԱՐ տեղ մը Օրբել. 2, 75, ԱՍ. 232 (Թ. 115 Ծղուկք գ.)։ որ կրնայ մեկնուիլ ամբ-ար (ռամկական ձեւ արմատ բառին վերը հաբանց, Ոսկեբ. Ես., Կանոնագիրքը, տես Karst Hist. Gramm. 104, 145) եւ դոր բառերէն, ուստի = «Արմատի քարք»? Շատ անապահով։ Հմմտ. վերն Արմատի անունը։

ԱՄԵՌՆԱՓՈՐ տեղի Թ. 113 Սոթք գ.ին մէջ Օրբել. 2, 264. տեսն?+որ «ձոր» տես վերն էջ 281։

ԱՄՐԱԿԱՆ, քարանձաւ Վանայ Արծր. 252, 253 = տրպան «ամրոց»։

ԱՑԾՈՒՑ ԲԵՐԴ Ց. Մամիկ. 36, ԱՑԾԵԱՑ ԲԵՐԴ Մաթ. Ուռհ. 21, 338, 393. այծ (յգ. սեռ. այծոյ կամ այծեայ)+բերդ։

ԱՑԾՊՏԿՈՒՆՔ ԽԱՍ. 31. «Այծու պրտկունք», լեռ մը, տես վերն էջ 186, այժմ Էյէրլի տաղ?։

ԱՑՐԱՐԱՏ մէկնաբանՀ Հայոց = Երբ. Ăr̄ārāt̄, տառերէն Urarţu, յն. Ἀλαρόδιοι? Տես վերն էջ 2, 10 ծան. 2, 11։ Ծագմամբ՝ ոչ-հայկական, տառագրանօրէն՝ մութ։ Սխալ մեկնութիւններ տես Murad Ararat und Masis էջ 20—22, վէրէր «Արարատը Ս. Գրոց մէջ» 52։ Հմմտ. Lynch Armenia 1, 197։

ԱՑՐԻՎԱՆՔ մենաստան (Թ. 187 Մազազ գ.ին մէջ Գառնոյ մօտ) կիր. 174, Վարդան աշխ. 420. այր (սեռ. այրէ)+վանք ԱՍ. 336—337. Յովհ. կիթ.ի քով 181 վանք այրէց, էջ 181 նաեւ վանք ամրոցի այրեն, հմմտ. ԱՍ. 346 «քանզի բազումք գոն փորածու այրք եւ ամրոցք» [Դարբիժեցիէն էջ 48]։

ԱՑՐՔ տեղի Թ. 113 Սոթք գ.ին մէջ Օրբել. 265 = այրէ «այրեր»։

ԱՓՈՒՌ ԱՆԱՀՏԱՑ (Հեռագիր՝ ՆԱՀԱՏԱՑ) Փաւստ. 219 լեռ մը. «Նոստէրատ (Եպիփան) ի մեծի լերինն ի տեղի դիցն զոր կոչեն աՓուռ Անահտայ»։ Դրիցը նկատմամբ տես վերն Թ. 4 Եկեղեաց գ.ի մէջ էջ 130։

Իսկ ԱՆԱՀՏԱՁՈՐ Սիւնեաց մէջ ԱՍ. 274, որ Օրբելեանի քով (էջ 269) Ընոպոյ յոր է (Ընոպոյ յոր Բրոսէ), ապահովապէս Անահտայ հետ գործ չունի։ Ընոպոյան ազգի-ի նկատմամբ (*Ընոնոպան ազգի-ութ?) Մասիսի ոտքն՝ Ակռաի մօտ, տես Murad Ararat und Masis էջ 54. այս աղբիւրն այլուր միշտ Ս. Յակոբայ աղբիւր կը կոչուի։

ԱՆԱՊԱՏ ամրոց Օրբել. 2, 94, 96, ԱՍ. 180, այլ եւ այլ տեղեր Սիւնեաց մէջ Օրբել. 2, 264, 265, ԱՍ. յանկ էջ 534, Անապատ կղզի (= Լիմ) մենաստանով Վանայ լճին մէջ տես Rohrbach Vom Kaukasus zum Mittelmeer էջ 61 = անապատ, տես էջ 273։

ԱՆԲԵՐԴ (ԱՄԲԵՐԴ) տեղի եւ շրջանակ Թ. 180 Արագածոտն գ.ի ԱՍ. 133, 156, Վար-

1 «Որոց անուանքն կոլին միւսն կայէ եւ միւսս ՅՈ Աղի սոյ»։

2 աղ Սեբ. 101, ազտ Յովհ. կիթ. 45 տարբ. ընթերցք՝ ազտ Խնճիճ. Հ.Հ. 443։

գան 92, կիր. 79, Brosset Historie de la Géorgie 1 (1849), 319. բէրդ բառմ կազմուած եւ ինչու առ. հասարակ *Ամբերդ չեն կոչուիր (Նէ հայերէնի մէջ կ'ըլլայ մէ, ի բաց առեալ ա փարատականով կազմուած բառերը, որոնց ն տառը թ տառէն յառաջ կը մնայ՝ ոնով կազմուած մեկալ բարդութեանց նման. այստեղ ալ ի բաց առնելու է ամբէն բառը).

ԱՆԳԵԼՏՈՒՆ թ. 17 գ.՝ Անգել ամրոցով տես վերն էջ 156, ասկէ՝ Անգելոյ Ասող. 82, Շամշեան Ա. 539. Խորենացւոյ էջ 79 անուանս տուած մեկուութիւնն իբր "ան-գեղ, ա-գեղ" (Հմմտ. Սուտ. Սեբ. 6) բնականապէս սխալ է.

Ակէ զանազանելու է ԱՆԳԼ (տես. Անգել) գիւղն կամ աւանն եւ ամրոցը թ. 177 Դրազկոսան գ.ին մէջ եղիշ. 44, Փարպ. 174, Սեբ. 74 (Աբուծանուոյ վրայ), 75, 76, Արծր. 309 (պէտք է ընթեռնուլ՝ Անգելն տես. փոխանակ Անգելոնի, Պրոկոպ. 1, էջ 263 belt. Pers.: Ἀγγλῶν. Ինտիմ. էջ. 415, A. Rabe, Arm. Uebersetzung der Alexander-Biographie էջ 50՝ τῆς Ἀγγλῆς χώρας = հայ. Անգլոյ գաւառի Պատ. Ալէքս. (Սուտ-Կայլիսթ.) վենետ. 1842 էջ 89, ԱԱ. 512, 518 = անգլ, տես. անգել?. Դարձեալ ասկէ ալ տարբեր է Անգլ գիւղը Յոյսմատուրը ինձմենանի քով էջ. 190 թ. 74 Տասդ գ.ին մէջ, Աբասամոի հարաւակողմը (վանայ լճին եզերքը), այժմ Enghil, Anguil, Ankagh եւն գրուած (տես Լինչ 2, 122, Cuinet 2, 666 եւն), զոր հայք Անկեղ՝ կ'արտասանեն (այսպէս Angegh կիպերսի քարտիզին վրայ գր. լեզուաս). Թէ այս եւ նման անուններդը, է. օր. Անգելի տեղի թ. 111 Վայոց ձոր գ.ին մէջ Օրբել. 262, Անգելոյ Օրբել. 1, 111, մէնել թարգմանչի անունէն թէ մեկալ անգլ (Գիրք վասակոց՝ անգլ), յայ. անգելի "ականջ ամանի" բառէն մեկնելու է, անռոյգ կը մնայ:

ԱՆԴԱԿ տեղ մը թ. 30 Տարաւն գ.ին մէջ Ցովհ. Մամիկ. 11, 34, 39, Ինտիմ. Նոր Հայ. 191, անդ բառին նուազակաները.

ԱՆԴԱՄԻՋ տեղի թ. 106 Գողթն գ.ին մէջ ԱՍ. 315 = ՀԱՆԴԱՄԻՋՔ ԱՍ. 326. անդ, հանդ? + մէջ:

ԱՆԴՈՍԱԲԵՐԴ տեղի (ամրոց) թ. 117 Բաղք գ.ին մէջ Օրբել. 270. Անդոս բերդ Օրբել. 1, 52. Անդոս յատուկ անուն (Իշխան Սիւնեաց Փաւստ. 28 եւն) + բերդ:

ԱՆԿԵՂԱՍՈՒԹ տեղի թ. 120 ա. Ալյախ գ.ին մէջ Օրբել. 260, ԱՍ. 212, Ալիեղ-ի-ի ԱՍ. 209, Ալիեղ-ի-ի-ոյ ԱՍ. 525. անդեղ? + ի-ի տես վերն էջ 280.

ԱՆՀԱՀԻՈՐ, ԱՆՀԱԽԻՈՐ եւն թ. 90 գ. Վասպուրականի, տես վերն էջ 220. տես. Անյահ? + ի-ր = "Անհաճի ձոր" — Անյոի գաւառական ձեւն է Անհաճի.

ԱՆՀԱԿՏԻՒԵ, ԱՆՀԵՒԱՑԻՒԵ թ. 83 գ. Վասպուրականի, տես վերն էջ 216. Անյա + ոյ մասնիկ, նախնաբար անուն տոհմի. Ա յն ենթադրու-

---

1 Ինտիմ. Նոր Հայ. 144 Անդ. կը գրէ, որ արդի արտասանութեամբ Angy = Angoy հնչուելու է.

թիւնն թէ անունս իր ծագումն առած ըլլայ Վանայ աբեւելակողմն՝ ընդ մէջ Իրճէք-կէօլի եւ Քէշիշ-կէօլի գտնուող Andzaw (Petermann Geogr. Mitt. 1865 էջ 210, Տիա. 7) = Anzaff գիւղէն, որ Արշակ-ուսի մնացեր է քան Բելքի Globus հա. 69 էջ 193, (Artchag կամ Erdjek-su կիպերսի աշխարհացոյցին վրայ), անոր համար ընդունելի չի կրնար ըլլալ, վասն զի այն գիւղն Անձաւացեաց գ.ին մէջ է:

ԱՆՁԻՏ, յետոյ ՀԱՆՁԻԹ թ. 15 գ. Զարբոդ Հայոց մէջ, յն. Ἀνζιτηνή, ասոր. Anzit, ասուր. Inziti, Enzite եւն, տես վերն էջ 151. Անուն նախահայկական է:

ԱՆՈՒՇԱՒԱՆ տեղի թ. 114 Աղահէճք գ.ին մէջ Օրբել. 266, ԱՆՈՒՇԱՎԱՆՔ տեղի թ. 110 Ճահուկ գ.ին մէջ Օրբել. 273. Անոյշ (կնոջ անուն էջ. 18, իբր հաստատի անուն "քաղցրաբոյր, սիրուն" էջ. 99)? + ուան կամ վանն: — խոր. Խ. 44 Անուշաւան անունը կը գտնուի եւ իբր երիկ մարգու անուն (նախնական պատմութեան մէջ).

ԱՇԽԱՐՀԱԲԵՐԴ Արծր. 191 ամրոց (որշափ կ'երեւայ թ. 7 Սպեր գ.ին մէջ). աշխարհ + բերդ:

ԱՇՈՏԱԿԵՐՏ "Աշոտ շինուած" կը հնչէ Բելքի՝ վիւնչի Աշոտ-գրքոն VBAG. 1901 էջ. 33, 290.

ԱԹՈՒՆԻՔ տեղ մը Տայոց մէջ Վարդ. 85. ապահովապէս ալուն բառէն չէ: Վարդանայ հրատարակիչը կը կարծէ թէ ասով իմացուածն է Էօշլք (Ոշկ) Թորթում կէօլի հարաւային արեւմտակողմը:

ԱՇՏԱՐԱԿ տեղի թ. 120 Դուսական գ.ին մէջ Օրբել. 271. ԱՇՏԱՐԱԿԻ (տես. Աշտարակ) գիւղ Բագրեւանդայ մէջ Ցովհ. Կիթ. 37 = Ասող. 82. ԱՇՏԱՐԱԿԱՆԻ գիւղ Արագածոտն գ.ին մէջ Ասող. 106 = Աշտարակ ԱԱ. 185, Լինչ 1, 141, տես Լինչի եւ ԱԱ.ի քարտէզները: = աշտարակ, յայ. աշտարէ:

(Շարունակելի.) Հ. ՀԻՒԲՇՄԱՆ

ԱՇԱԼԵՏԱՑՔ

ԾԱՂԿԻՓՈՒՆՋ

1. Մլեէ Թագուհոյն Աւետարանին զարդանկարները: — 2. "Հայերէն բեմը — Պարիսէն ի Բոմբայ," ա 3. Նոր հայագէտ մը: — 4. Պոնտական Ուսումնասիրութիւնք: — 5. Տեղիէն: — 6. Տիկին Ինգա Նալբանդեանի "Գոնակերգը."

1. Մլէ թագուհոյն Ա-եւաթանին կարդանկարները ուսումնասիրելու տակ անցեալ տարի (թ. 2) ներկայացուցած էինք Պրոֆ. Strzygowskiի մատենախօսականը, որ վերջէն գերմ. լեզուաս ալ հրատարակուեցաւ Byzantinische Zeitschriftին մէջ (XIV Հատ. 3 եւ 4, 1905, էջ 728—732). Ցարգելի

digitised by A.R.A.R.@